

Ֆ. Ե. Դուբիեզ (F. J. Dubiez)

ՀԱՅԵՐԵՆ ԳՐԲԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՍԵՐԴԱՍՈՒՄ
XVII—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

«Համալսարանի գրադարանն ունի հայերեն գրքերի արժեքավոր հավաքածու. այդ գրքերը սկիզբ են առել ներկայումս արդեն գոյություն չունեցող հայկական եկեղեցուց. նրանց մեջ կա մի տասնյակ Ամստերդամի հրատարակություններ, որոնցից մի քանիսը գեղեցիկ առանձնահատուկ կաղմերի մեջ են»—առում է Վր. Ս. Պ. Բուրգերը՝ «Պատմական ցուցահանդեսի կատալոգին» (Ամստերդամ, 1925) կցված իր ներածության մեջ, Հայերեն գրքերի այդ հավաքածուի մասին բավական վարպետորեն գրել է նաև 1925 թ. Ֆրեդերիկ Մակլերը՝ «Ecole Nationale des Langues Orientales Vivantes»-ի նախկին պրոֆեսորը: Նրա տվյալները ի մի են հավաքված մի հոդվածի մեջ, որի վերնագիրն է «Les livres emprimes Armentiens de la Bibliothèque de l'Université d'Amsterdam», և որը գետեղված է «Revue des etudes Armeniennes»-ի մեջ (հատոր 6, պրակ 2, 1926, էջ 71—148): Հոդվածը վերջանում է հայերեն այն բոլոր գրքերի բիրլիոգրաֆիայով, որոնք գտնվում են Ամստերդամի համալսարանի գրադարանում:

Արդեն 1922 թ. պրոֆ. Մակլերը զբաղվում էր հայկական ձեռագրերի, այդ թվում նաև Ամստերդամի համալսարանի գրադարանում գտնվող ձեռագրերի ցուցակագրությամբ: Դրա արդյունքները նա նույնպես ի մի է հավաքել «Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suede...»-ում (Փարիզ, 1924, in—8°, էջ 166—170) Պրոֆ. Ֆրեդերիկ Մակլերի հրատարակություններն ունեն ոչ միայն խոշոր գիտական արժեք մեր մայրաքաղաքի հայկական տպարանների պատմության տեսակետից, այլև նրանք հանդիսանում են միմյանմանակ որպես կարևոր աղբյուրներ Ամստերդամի քաղաքակրթական պատմության համար 17-րդ դարում և 18-րդ դարի սկզբի շրջանում:

Չնայելով պրոֆ. Մակլերի հիանալի աշխատանքին, մենք այնուամենայնիվ համեմատաբար քիչ բան գիտենք Ամստերդամի հայկական գաղութի և այն տպարանների մասին, որոնք 1660 թ.-ից սկսած բավարարում էին հայերի հոգեկան պահանջները: Ն. զը Ռոևերի (N. de Roever) «Ուրվագծեր և սլատկերներ քաղաքի պատմության և նրա նախկին բնակիչների կյանքի և բարքերի մասին» աշխատության 3-րդ հատորի «Վաճառականություն և արդյունարբերություն» բաժնում մենք գտնում ենք մի քանի նոթեր հայ գաղութի և նրա տպարանների մասին մեր մայրաքաղաքում: Ես ցանկանում եմ ուշադրություն հրավիրել այն բանի վրա, որ հայկական տպարանների և հարակից թեմաների մասին եղած գրականության մեջ, ընթերցողին միշտ առաջարկում են զը Ռոևերի աշխատության 1891 թ. հրատարակությունը (էջ 1—19), բայց կրթք նրա գրքի 1902 թ.ի հրատարակությունը (էջ 135—144): Որքան գիտեմ, զը Ռոևերը առաջին ժամանակակից հեղինակն է, որը գրել է Ամստերդամի հայկական գաղութի մասին: Նրանից առաջ քաղաքային պատմաբան Յան Վագենաարն էր, որ 1765 թ. Ամստերդամը, նրա ծագումը, զարգացումը, պատմությունը և այլն» իր երկասիրության երկրորդ հատորում խոսել է մայրաքաղաքի

1 Սույն հոդվածի հեղինակ Ֆ. Յ. Դուբիեզը հուլանդացի է, Ամստերդամի բնակիչ: Նա աշխատում է հուլանդական պետական օդադնացության սպասարկման գրադարանում և հեղինակ է մի շարք գրական գործերի, բիրլիոգրաֆիաների, գիտության և արվեստի պատմության վերաբերյալ գրքերի: Ֆ. Յ. Դուբիեզի սույն ուսումնասիրությունը բազմաթիվ իլյուստրացիաներով հրատարակվել է Հոլանդիայի աշխարհագրական ընկերության օրգան «Ons Amsterdam» ամսագրի 1961 թ. 5-րդ և 6-րդ համարներում: Սուրբ էջմիածին և սուրբ Սարգիս» վերնագրով, հուլանդերեն, որից նշանավոր գրականագետ Ֆ. Ֆոլհարերը թարգմանել է էսպերանտոերեն:

Հոդվածը հայերեն հրատարակվում է առաջին անգամ, ոչ մեծ կրճատումներով և էսպերանտոերենից թարգմանել և Ռ. Ս. Իշխանյանի օգնությամբ տպագրության է պատրաստել ընկ. Սիմ. Սվրտչյանը, որին և խմբագրությունն իր շնորհակալությունն է հայտնում:

Հոդվածի բոլոր ծանոթագրությունները թարգմանչին են:

հայկական եկեղեցու մասին: Հետո „Amsterdamer“-ի 1887 թ. «եպտեմբերի 4-ի համարում կա մի հոդված, որը լրացնում կամ սրբագրում է Վադենարի աշխատությունը:

Դր Ռոնեոը պատմում է, որ 1612 թ.-ից սկսած փոխադարձաբար բողոքված առևտրական կապեր գոյություն ունեին մեր երկրի և Լևանտի ու Միջերկրականի նավահանգիստների միջև: Այդ կապը երկու կողմերին էլ երաշխավորում էր կրոնի ազատություն առավել ևս այն պատճառով, որ հայերի դավանությունը, որի մասին մենք խոսում ենք այժմ, ոչ մի բնդհանուր բան չունի շոտի հետ: Ուրեմն նրանց նույնպես չէր վերաբերում պապականների դեմ եղած հայտարարությունները: Արդյոք այն, ինչ ասում է այստեղ ղը Ռոնեոը, ճիշտ է թե ոչ, արժանի է լուրջ հետազոտության: Հենց այդ էլ մենք կտեսնենք մեր այս հոդվածի շարունակության մեջ (Ամստերդամում 1666-ին Ոսկան եպիսկոպոսի կողմից տպագրված հայերեն աստվածաշնչի համար խնդրել են պապի հավանությունը): Պրոֆ. Հ. ղը լա Ֆոնտեն Վերվեյը բարի եղավ իմ ուշադրությունը հրավիրելու այն փաստի վրա, որ մի ժամանակ Ամստերդամում գոյություն ունեին հայկական երկու տարբեր եկեղեցական ուղղություններ: Թե ինչ բնույթ ունի այդ, դրանում ես ձեռնահաս չեմ: 1650 թվականից համեմատաբար կարճ ժամանակ անց Ամստերդամում գոյություն ուներ հայկական մի բավական մեծ գաղութ: Նրա ընդարձակման հետ զուգընթաց մեծացավ նաև հայերի հոգևոր, գուցե և աշխարհիկ գրքերի կարիքը: Մենք տեսնում ենք 1666 թ. վերահիշյալ հայ եպիսկոպոսի գալուստը Ամստերդամ, նա հատկապես լավ և նպատակահարմար ձևով ընդառաջեց իր համաերկրացիների հոգեկան պահանջներին:

Դիտենք, որ Ամստերդամում հայերը առավելապես բնակարաններ փնտրում էին նյութամարտի շրջակայքում: 18-րդ դարում նրանք նույնպես հիմնեցին իրենց եկեղեցին այս թաղամասում: Այդ մասին Վադենարն ասում է. «Առևտրական հարաբերությունները Զմյուռնայի և Լևանտի հետ պատճառ դարձան նախորդ դարում, որ մի շարք քրիստոնյա հայեր բնակություն հաստատեցին այստեղ: Նրանք իրենց կրոնական պարտականությունները (ժողովները) կատարում էին Դիկստրաատի վրա գտնվող մի տան մեջ: Բայց 1714 թ. նրանցից երկուսը եկեղեցական պիտ Բաբասան դե Սուլթանից և Նիկոլասա Քեոդորից թուլյութություն ստացան հիմնել նոր և ժողովրդական մի եկեղեցի, որտեղ նրանք հենց ներկայումս էլ օրական երկու անգամ, իսկ կիրակի օրերին երեք անգամ հավաքույթ են ունենում: Այդ եկեղեցին, որ մի զեղեցիկ շենք է, երկու շարք ապակյա պատուհաններով, կանգնած է կայքերոստրատ և Քոնինգստրատ փողոցների արանքում՝ Բավաս Բումսլութի ուղղությամբ: Նրանք այդտեղ ունեն եկեղեցական մի քանի սեղաններ, բայց ամբիոն չունեն: Եկեղեցին սպասարկում է մի քահանա, որին, համայնքի խնդրանքով, ուղարկել է այդտեղ Մեծ Հայաստանի պատրիարքը»:

Եթե Վադենարի տեղեկությունները ճիշտ են, այդ դեպքում Ամստերդամի հայերը 17-րդ դարի երկրորդ կեսին, — այն ժամանակ, երբ հիմնեցին առաջին հայկական եկեղեցին, — հավաքվում էին աղոթելու համար Դիկստրատի վրա գտնվող մի տան մեջ: Այդ բանից մենք կարող ենք հետևել նույնպես, որ Ոսկան եպիսկոպոսը ևս, որի մասին հետադարձում ես մանրամասը պիտի խոսեմ, և որն այնչափ շատ բան է արել հայերեն լեզվով Աստվածաշունչը հրատարակելու համար, — կարող էր միաժամանակ ղեկավարած լիներ կրոնական ժողովները Դիկստրատի ժամանակավոր եկեղեցում:

* * *

Տպագրվելիք գրքերի համար տառեր պատրաստելու գործում հայերի կողմից ցուցաբերած ակտիվ գործողությունների մասին մենք հիշատակություններ ենք գտնում Ռոնեոի մոտ, ըստ որի 1658 թ. նոյեմբերի 27-ին հայազգի Մատթեոս Ավագը² պայմանագիր կնքեց էլզբվերների տոհմի հայտնի տառեր պատրաստող Խրիստոֆել վան Դեյկի հետ, որը խոստացավ պատրաստել 170 հայր տառեր և հայերեն տառերի 240 մայր տառեր՝ մեծ և փոքր շափերի: Այս հայր տառերի ու մայր տառերի համար պիտի վճարվեր 34 հինգսենտանոց դրամներով: Բացի դրանից, Վան Դեյկը պահանջում էր ապրանքը հանձնելիս վճարել ևս 10 գուլդենի արտակարգ վարձատրություն իր կնոջ համար:

Հայերեն տառեր պատրաստելու և հայ լեզվով դասագրքույկներ տարածելու վերաբերյալ մենք կարող ենք հիշատակել Դր. Ս. Պ. Բուրգերի ուսումնասիրությունները „Het Boek“ պարբերականում (1927 և 1928 թթ.)³:

² Խոսքը Մատթեոս Մարեցու մասին է:

³ Ուր հեղինակն, ի դեպ, խոսում է նաև հայերեն այբուբեն պարունակող երկու սկզբնաղբյուրների մասին:

Յոհ. Էնշեդեի և որդիք Ֆիրմայի ժողովածուում (Հարլեմ քաղաք), նույնպես գոյություն ունի „Alphabetum Armenum“ 1784 թ. նոր հրատարակությամբ Այս գրքույկի լրիվ վերնագիրը հետևյալն է. „Alphabetum Armenunum cum Oratione dominicali, Salutatione angelica, Initio Evangelii S. Johannis et Cantico poenitentiae. Romae MDCCLXXXIV. Typis S. Congreg. de propaganda fide. Praesidium adprobatione“: Այս երկի հեղինակ Յոհաննիս Բրիտտֆորուս Ամադուսիուսը, որի մասին արդեն հիշել ենք, մեղ պատմում է, որ այբերենարանները, որոնք արդեն սպառված են, միշտ էլ վերատպագրվում են, և ավելին, որ այս 1784 թ.-ի հրատարակությունը փոխարինում է նախկին 1673 թ.-ի հրատարակությանը: Այնուհետև Յոհաննիսը տալիս է մեղ մի կարևոր ակնարկ լեզվի և նրա տառերի գրության պատմության մասին: Նա պատմում է, որ 17-րդ դարում հայ հոգևոր հովիվ Ուլգանուս վարդապետը նրեանից, ուղարկված է եղել Եվրոպա հոգալու և հաջողությամբ տպագրելու աստվածաշունչն ու պատարագի գրքերը. հետո, որ այս Ուլգանուսը մեկնել է Վենետիկ և Ամստերդամ հոգալու հայ տառերի ձևումը և սուրբ գրքերի տպագրությունը: Նա նույնպես պատմում է, որ Հոմանուս Կոնդրեգացիան սկսեց տպագրել, և մի գիրք արդեն հրատարակեց 1623 թ.:

Մենք պետք է ուշադրություն հրավիրենք նաև տառաձուլման և տպագրության հալոցումների Ամստերդամ հրատարակությունում զետեղված (1924 թ.) պրոֆ. Գր. Գ. Ֆոն Անտալի մի հոդվածի վրա (էջ 19—21), որի վերնագիրն է. Nicolaas Witsen en de Armenische drukkerij“ (Նիդրլանդացի Վիտսենի և հայկական տպարանը) և որը գտնվում է Ամստերդամի քաղաքային արխիվում: Այդտեղ մենք գտնում ենք որ Ամստերդամի նախկին քաղաքապետը՝ գիտնական Նիդրլանդացի Վիտսենը որոշ չափով զբաղված է եղել հայկական տառատիպերի պատրաստման գործով: Նիդ. Վիտսենը, որը ծնվել է 1641 թ. և 1682—1705-ը եղել է Ամստերդամի քաղաքապետը, կարող էր հետևել բավական մոտիկից հայկական գրքերի տպագրության պատմության զարգացմանը մայրաքաղաքում, և, իր բարձր կրթության ու բազմակողմանի հետաքրքրության շնորհիվ, իրոք բավական ուշադրություն էր դարձնում այդ բանի վրա: Պրոֆ. Ֆոն Անտալը պատմում է մեզ, որ Նիդրլանդացի Վրաստանում հայերեն գրքեր տպագրելու առթիվ, Միդլորֆալանից հարաբերության մեջ մտավ հունգար գրող և գրքերի տպագրիչ Նիդրլանդացի Կիսի հետ, որի համար տառեր պետք է փորագրված լինեին արդեն: Այս Կիսը Նիդրլանդացի օգնությամբ պատվեր ստացավ պատրաստելու հայերեն տառատիպեր, որոնք պետք է ուղարկվեին Վրաստանի թագավորին՝ երկրում հիմնվելիք մի տպարանի համար:

Դր. Կարլ Բյորկբոմի (dr. Carl Björkbom) հաղորդագրությունից (Henric III Keyzers Georgiska Sällprov, Nordi-k Tidskrift for Bok-och Bibliotekvasen, № 22. 1935) մենք իմանում ենք, որ Նիդրլանդացի Կիսի՝ Ամստերդամից ուղարկված երկու նամակները (1686—87) գտնվում են Հինկոպինդի Ստիֆտ—գրադարանում: Այդ նամակներից մենք շատ բան ենք իմանում Նիդրլանդացի Կիսի մասին: Նա երևան է գալիս ոչ միայն սրպես մի անձնալորություն. այլ հրաշալի կերպով տիրապետում է տառեր կտրելու գործին, այլ և դիտեր մեկնարանություններ տալ լատիներեն լեզվով:

Նիդրլանդացի Կիսը ծնվել է Ալսո-Միսոտալում (Alsó-Miszófalva) 1650 թ. և ստացել է աստվածաբանական կրթություն: Մոտավորապես 1680 թ. նա մեկնել է Նիդերլանդիա, այդտեղ համալսարանում աստվածաբանի կոչում ստանալու համար: Միաժամանակ էա որպես սրբագրիչ պիտի աշխատի Ամստերդամում Գանիել էլզեվիրի մոտ հունգարերեն ավետարանը սրբագրելու համար: Պարիզ անունով իր բարեկալը Կիսին խորհուրդ տվեց, որ գալով Ամստերդամ նա կարող է քարուղելու փոխարեն տպագրական գործով զբաղվել:

„Het Boek“ պարբերականը (6-րդ տարի, 1917) պարունակում է Ե. Միկոսի՝ ռճունգրական բիրիանները Ամստերդամում խորագրով հոդվածը, որտեղ մենք գտնում ենք կարևոր մանրամասնություններ Նիդրլանդացի Կիսի մասին: ...Միկոսն ասում է, որ Վրաստանի (Կովկասում) իշխան Արշիլը (Artsil) դիմեց քաղաքապետին Նիդրլանդացի Վիտսենին, խնդրելով փնտրել իր համար մի ընդունակ տառ կտրողի, որը կարողանա իր դրած այբուբենով պատրաստել առաջին հայերեն տառերը: Քաղաքապետը Վիտսենին այդ աշխատանքը վստահեց Նիդրլանդացի Կիսին, որն. անկասկած, լավագույն կերպով կատարեց հանձնարարությունը, որովհետև Վիտսենին, իր միջնորդության համար, շնորհակալություն հայտնվեց 1686 թ. դեկտեմբերի 17-ին գրած նամակով: Միկոսի այս խոսքերից կարելի է հասկանալ, թե այն մանրամասնությունները, որ մենք գտաւր „Typografische Mededelingen“-ում տպագրված՝ պրոֆ. Ֆոն Անտալի հոդվածում. ըստ որի Կիսը գիմել է քաղաքապետին Վիտսենի օգնությունը հայերեն տառեր կտրելու համար. մի փոքր այլ կերպ են: Թվում է, որ այս գործում նախաձեռնությունը վերցրել է Ամստերդամի քաղաքապետը, որն և խնդրել է Նիդրլանդացի Կիսին կտրելու հայերեն տառերը: Այս խնդիրն.

ասենք, շատ էլ կարևոր չէ: Ավելին. պրոֆ. Ֆոն Անտալի խոսքերը մենք կասկածի տակ չպետք է առնենք. չէ՞ որ հնարավոր է, որ Կիսր լսած լինի գրույցներ Արլիի կողմից քաղաքագլուխ Վիտսենին գրած նամակի մասին և հետո միայն արած լինի իր խնդիրքը, որից և ստացվեց նպաստավոր հետևանքներ, որը մենք արդեն գիտենք:

Եթե նույնիսկ հեռավոր Վրաստանից Ամստերդամ դիմում է եղել հայկական տառեր կրտսերի՝ այդ երկրում հիմնվելիք տպարանի համար, պարմանալի չէ, որովհետև վաղուց է, որ մեծ համբավ էր ստացել Ամստերդամում հայերեն տառեր կտրելու գործը: Այդ համբավն առաջացավ Քրիստոֆել վան Դելյի աշխատանքի շնորհիվ և շարունակվեց Նիկոլաաս Կիսր կողմից: Առայժմ Նիկոլաաս Կիսրն հաջողվեց պատրաստել իր հունգարերեն բիրլիան և հրատարակել այն, ապա՝ 1686 թ. Սաղմոսագիրքը և 1687 թ.՝ Նոր Կտակարանը:

Շուտով տարածվեց Նիկոլաաս Կիսր հռչակը. նա համարվեց Եվրոպայի ամենալավ տառեր կտրողը, որի շնորհիվ նա հանձնարարություններ ստացավ Եվրոպայի մայր ցամաքի բազմաթիվ վայրերից: Մեր առաջ այժմ հարց է առաջանում, ինչպիսի հարաբերություններ կային Ամստերդամում աշխատող հայ տպագրողների և հունգար աստվածարան, գրքերի տպագրող և տառ կտրող Նիկոլաաս Կիսր միջև, և արդյոք սա նրանց որևէ աշխատանք հանձնել է, թե ոչ: Դր. պրոֆեսոր Գ. Մ. Օվինկի «Մի քանի խոսք Ամստերդամի տառեր ձուլողների ձևնարկության պատմության մասին» վերնագրով հոդվածում, որը լույս է տեսել 1950 թ. Ամստերդամի գրաֆիկական դպրոցի «Ամստերդամը և տպագրական արվեստը» հրատարակության մեջ, մենք կարողում ենք. «Այդ ժամանակներում փորագրողներ շատ քիչ կային. ես հայտնաբերել եմ, որ 17-րդ դարի վերջում Դիրկ Վոսկենսից և Ռոլուից բացի կային միմիայն զառամյալ Կատցեն Բերգերը և ոմն Նիկոլաաս Կիսր, որն, ի միջի այլոց, աշխատում էր հայադղի Ավագի և հրեա հրատարակիչների, զուցե նաև Ելաույի համար: Եթե մենք պրոֆ. Օվինկի այս խոսքերը համեմատելու լինենք այն բուրդի հետ, ինչ մենք արդեն գիտենք հայադղի Ավագի մասին, այն ժամանակ մեզ համար պարզ կլինի, որ տառեր կտրող Քրիստոֆել վան Դելյը պայմանագիր է կնքել նրա հետ 170 pincoenen և հայերեն տառերի 240 մեծ և փոքր չափերի մայրեր կտրելու համար: Այս բուրդը պատահել է Ամստերդամում 1658 թ.: Նիկոլաաս Կիսր այն ժամանակ ծտարեկան է եղել և անշուշտ հաճախելիս է եղել Ալզո-Միստոտֆալնի տառուկան դպրոցը: Միմիայն 1656 թ., ուրեմն 28 տարի հետո, մենք տեսնում ենք, որ քաղաքագլուխ Նիկոլաաս Վիտսենը շնորհակալական թուղթ է ստանում Վրաստանից այն աշխատանքի համար, որը կատարել է Նիկոլաաս Կիսր: Պրոֆ. Օվինկի վերոհիշյալ հոդվածի մեջ մենք նաև կարողում ենք, որ Դանիել էլզևվիրի այրին 1681 թ. հրատարակել է տառերի նմուշներ, որտեղ կային տառերի այն տեսակները, ինչ-որ կտրել է «հիշարժան (հանգուցյալ) Քրիստոֆել վան Դելյր»:

Չնայած 1681-ին վան Դելյն արդեն մեռած էր, այնուամենայնիվ այդ բանը հայադղի Ավագի համար չէր կարող առանձնակի նշանակություն ունենալ: Բայց մենք կարող ենք անշուշտ հավատալ, որ նա այլևս չէր զբաղվում հայերեն տառերի կտրելու գործով: Մենք կարող ենք համարձակ կերպով ելնել այն մտքից, որ պրոֆ. Օվինկի 1950 թվականի հոդվածի մեջ մի սխալ է սողոսկել: Եթե մենք գիտենք Ս. Մ. Կլերկոպերի և Վ. Պ. Ստորումի «D. Boekhandel te Amsterdam voornamelijk in de 17-e eeuw» («Գրավաճառությունը մանավանդ 17-րդ դարում») խրագիրը կրող հանրածանոթ գրքին, 773—774-րդ էջերում մենք կգտնենք նոտար Ֆրանսուա Տիքսեոդեթի արձանագրությունը, որից ամենայն հավանականությամբ, մենք կարող ենք եզրակացության հանգել պրոֆ. Օվինկի սխալ կարծիքի մասին: Հենց այդ արձանագրության մեջ խոսվում է Մատթեո Հովհաննես⁴ անունով մեկ տպագրիչի մասին, որը Նիկոլաաս Կիսրն շինել է տվել մեծ քանակությամբ կնիքներ, տառամայրեր և տպագրական տառերը մոտավորապես 8 կամ 9 տարի առաջ: Ուրեմն այդ պետք է պատահած լինի 1685 կամ 1686 թվականին, երբ Նիկոլաաս Կիսր, ինչպես գիտենք, աշխատելիս է եղել Ամստերդամում: Հավանական է, որ այդ շփոթությունը առաջացել է երկու հայադղիների միևնույն անունից, այսինքն Մատթեո Ավագ՝ 1658-ից և Մատթեո Հովհաննես՝ 1685—86-ից:

Պրոֆ. Մակլերի աշխատության մեջ մենք այնուամենայնիվ որևէ հիշատակություն չենք գտնում Մատթեո Հովհաննես անունով հայադղի տպագրիչի մասին, որը, մոտալորապես այդ ժամանակ, Ամստերդամում աշխատելիս լինել որպես այդպիսին: Նոտար Տիքսեոդեթի արձանագրության մեջ տպագրիչ Մատթեո Հովհաննեսը հիշատակվում է նաև որպես «Joannes de Ogourien հայ քահանա». զուցե այդ հուշում է մեզ, որ այստեղ գործ ունենք մի երկրորդ հայադղի կարևոր գրատպագրիչի, այն է Ոսկան Լպիսկոպոսից հետո Մատթեոս Վանանդեցու:

⁴ Խոսքը Մատթեոս Հովհաննեսյան Վանանդեցու մասին է:

հետ, որի մասին հետադայում դարձյալ կխոսենք նրա գործածած տառերի կապակցությամբ: Մենք կխոսենք նաև մի ուրիշ հայ քահանա և զրատպագրիչ Քոմաս Վանանդեցու մասին, որը նոտար Է. դե Վիլդեի 1705 հոկտեմբերի 30 թվակիր արձանագրության մեջ (Ամստերդամում) անվանվում է «Ամենահարգելի պարոն Քոմաս Վարդապետ, սուրբ խաչի արքեպիսկոպոս...»: Այս Քոմաս վարդապետը (Վանանդեցին) իր ազգական (հորեղբորորդի) Ղուկասի հետ կառավարում էր, համենայն դեպս 1695 թվից, Ամստերդամի հայկական տպարանը: Ինչպես կերևա սույն հոդվածի շարունակությունից, վանանդեցիների կողմից գործածվող տառերը հատուկ համարով ունեին. դա կարող է հիմք ծառայել ապացուցելու համար, որ այս տպագրիչները զոչոժոժեմ են եղել նիկոլասս Կիսի գեղեցիկ տառերը... Պրոֆ. Մակլերի հրատարակությունը խոսում է այդ անունը կրող միայն երկու տպագրիչի մասին, այն է Մատթեոս կամ Քոմաս և Ղուկաս: Նոտար դե Վիլդեն էլ 1705-ի իր արձանագրության մեջ խոսում է միայն Քոմասի մասին, որը, «տասը տարուց իվեր, այսինքն 1695-ից սկսած, ապրում է այս քաղաքում... և... որը, հանուն իր ազգի, հիմնեց (պատրաստել տվեց) մի տպագրական մեքենա իր մի շարք պարագաներով (գործիքներով) զրա համար...», մինչդեռ Մատթեոսը 1685-ից արդեն աշխատում էր Ամստերդամում...»:

* * *

Քիչ վերև Ամադուտիուսի կողմից անվանված եպիսկոպոս Հովհաննես վարդապետը (Oganus Vartanied) Երևանից՝ ոչ այլ ոք է, եթե ոչ հայտնի և արդեն մի քանի անգամ մեր կողմից հիշատակված Ոսկան եպիսկոպոսը, որն այնչափ շատ էր աշխատում Ամստերդամում հայկական տպարան հիմնելու համար: Երևան քաղաքը, որտեղից Ոսկան եպիսկոպոսը հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ թե՛ Վենետիկում և թե՛ այլուր, եկավ հասավ Ամստերդամ, ներկայումս գտնվում է ՄՍՄԻ-ում, անմիջապես Հայաստանի սահմանի վրա և մոտիկ էջմիածնին: Պրոֆ. Մակլերն է, որ Ոսկան եպիսկոպոսի մասին շատ լավ տեղեկություններ է տալիս մեզ «Revue des etudes Armeniennes» հանդեսում 1926-ին լույս տեսած պրոֆ. Մակլերի ուսումնասիրությունից մենք իմանում ենք նույնպես, որ 1660-ին արդեն տպագրվում էր հայերեն առաջին գիրքը գուցե հայազգի Մարեցու կողմից: Մի տարի հետո, 1661-ին, լույս տեսավ Ամստերդամում երկու հայերեն գիրք ևս, որին հետևեց 1662-ին երրորդ գիրքը, բոլորն էլ հրատարակված Ոսկանի եղբոր Ավետիսի կողմից...

Ճշգրիտ որտեղ էլ գտնվում հայկական առաջին տպարանը, մինչև այժմ ես չեմ կարողացել գտնել, ուրեմն և չի կարող խոսք լինել այդ մասին հավաստի կերպով: Հավանական է, ճշմարտությունից հեռու չի լինի, եթե մենք կարծիք հայտենենք, որ նա գտնվելիս է եղել Նյումաոկթ և Բուսուլութի անմիջական շրջակայքում, որտեղ նույնպես հայկական դադութն է իր բնակությունը հաստատել:

Դր. Քերզն իր աշխատության մեջ ելնում է մեզ դեմհանդիման այս խնդրում: Նա պատմում է, թե 1655 թ. Հայաստանի պատրիարք Հակոբ 4-րդը, արվեստների և գիտությունների ազեղեղուն երկրպագուն, տեղեկանալով, որ Վենետիկի և Զուլայի (Fesulii) տպարանների տառատիպերը անպիտք են դարձել, Մատթեոս վան Ցար (Matthaseus van Dsar) անուշենով իր սարկավագին ուղարկեց նիդերլանդիա, այդտեղ ավելի լավ տիպեր կտրելու համար: Դր. Քերզն կարծում է, որ այս Մատթեոս վան Ցարը հավանաբար կարելի է նույնացնել Մատթեոս Ավագի հետ, որի անձնավորության մասին իրավարան De Roever-ը (Ռուվեր) հիշատակություն է անում տառ կտրողներ էլզեվիրների, Քրիստոֆել վան Դեյկի կապակցությամբ...

5 Շարունակության մեջ հեղինակը խոսում է այն փոխհարաբերությունների մասին, որ գոյություն ունեն հունգար աստվածաբան և տառ կտրող նիկոլասս Կիսի և Ամստերդամում բնակվող հայ տպագրիչների միջև: Այնուհետև նա հիշատակում է հայերեն տառերի մի ավելի ուշ օրինակի մասին, որի վերաբերյալ նա հիշատակության է հանդիպել «Ամստերդամի հասարակական նոտար, հանդուցյալ Է. Ա. Վարմեյիսի հիմնականում տպագրութան արվեստի զարգացմանը վերաբերող հին և նոր գրքերի աճուրդի հանված կարևոր հավաքածուի ցուցակում» նշված մի գրքի մեջ: Այդ աճուրդը կազմակերպվել է Մեննո Հերցերգեր միջազգային հնահավաքատան կողմից: Դուրիեղը դրում է. «Հիշատակված գրքի 438-րդ էջի վրա գրված է հետևյալը. «Մարտի 3, հայկական նմուշներ, Փարիզ (Յ. Յ. Մարսել), 1829. լաթակազմ, հայկական տպագրություն, Պարունակում է, ի միջի այլոց հայկական 6 տառատեսակներ՝ բոլորը դժագրված և կազմված հեղինակի կողմից: Բոլոր էջերը տպագիր են»:


* * *

Ոսկանի մասին գրած պրոֆ. Մակլերի բիրլիոգրաֆիական, ես կկամենայի ասել նաև կենսագրական, ակնարկը, ուրվագծում է Ամստերդամի հայ տպարանի գրեթե ամբողջ պատմությունը: Ոսկանի ծնողները բնիկ Երևանցիներ էին: Սրանց բռնի կերպով Իսպահան էր ջշել Շահ-Աբրահամ 17-րդ սկզբներին: Այդ քաղաքում ծնվեց, հետագայում հայ տպագրիչ, նրանք որդին: Ոսկանը՝ խաչատուր Կեսարացու աշակերտը և Սիմոն Զուղայեցու դասընկերն էր: Հետագայում վերջինս դրոմ է հայերեն քերականություն և այլ գրքեր. նա մեռնում է 1657 թ. Թուրքիայում, որը գտնվում է Սև ծովի մոտ շատ ավելի արևմուտք, բայց Սամսոնից հարավ...

Ոսկանը առաջին անգամ գնաց էջմիածին՝ կաթուղիկ Մովսեսի ընկերակցությամբ, որի շնորհիվ նա վերադարձավ իր ծննդավայրը: Երբ Ֆիլիպոսը դրավեց էջմիածնի բարձր քահանայական աթոռը, Ոսկանը կանչվեց ներկայանալու նրան: Ծիշտ այդ ժամանակ էջմիածնում




Նկ. 1. Ոսկանի 1646 թ. Ամստերդամում տպագրած հայերեն Աստվածաշնչի Մագնուսի կազմը: Փարիզի ազդային գրադարան:



Նկ. 2. Հայերեն Աստվածաշնչի Մագնուսի կազմը՝ Լեյդենի համալսարանական գրադարանում:

էր գտնվում Դոմինիկյան միաբանության լատին վանական Պ. Պաուլո Պիրոմելին, որին հայերեն անվանում են Սիդերնացի: Վերջինս Ուրբանոս 8-րդ պապի կողմից ուղարկված է եղել Արևելք: Հայտնի է, որ նա այցելել է Միջագետք, Վասսուրական (Վան), Արարատ և Լիբ ուրիշ շրջաններ... Հայ քահանայի և լատին վանականի միջև տեղի ունեցան փոխանակություններ լեզվական հատկանիշների մասին, ավելին, նրանք պրաղվեցին նույնիսկ թարգմանություններով: Պիրոմելին շուրջ տարի անցկացրեց էջմիածնում, որից հետո նա վերադարձավ Հոռոմ տանելով իր հետ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը՝ համեմատած լատինական տեքստի հետ: Վերադառնալով Հոռոմ Պիրոմելին շատ աշխատեց տպագրել Աստվածաշնչի թարգմանությունը, սակայն մերժվեց: Ապա նա վերադարձավ էջմիածին նպատակ ունենալով Ոսկանի հետ միատեղ բարեփոխություններ մտցնելու իրենց թարգմանության մեջ: Հավանական է Ոսկանը Պիրոմելիի հետ միասին հետո մեկնել է Արևմուտք, անձամբ փորձելու տպագրել Աստվածաշնչը մի քանի ուրիշ երկրի հետ, ուր նա այդ ժամանակի ընթացքում արդեն պատրաստել էր: Զմյուռնայից նա մեկնեց Լիվորնո, որտեղ բնակվում էին շատ հարուստ հայ լուսաբաններ և որտեղ դեռ 1640 թվականին արդեն հիմնված էր հայկական եկեղեցի: Ֆինանսական աջակցություն, որը խնդրեց նա հայ վանատականներից Աստվածաշնչի տպագրության համար, մերժվեց: Բացի այդ, որոշ օրենքներ արգելում էին, որ երկու միանման ձևերով թարգմանություններ գոյություն ունենան կողք-կողքի: Ոսկանն այդ ժամանակ դնաց Հոռոմ, որտեղ նա հանդիպեց նույն ժամանակներից, ինչ-որ Պիրոմելին: Ապա նա նորից վերադարձավ Լիվորնո, որտեղ նրան

հաջողվեց գտնել չուղայեցի երեք անձնավորությունների՝ Ստեփանոսին, Պետրոսին և Քեոզորոսին, որոնք խոստացան օգնել նրան իր ձեռնարկության մեջ: Այս երեք հայերը պայման կնքեցին Ոսկանի հետ, որով Ստեփանոսը և Պետրոսը խոստացան, երբ աստվածաշունչը տպագրած պատրաստ լինի, տանել այն էջմիածին վաճառելու համար: Ինչ վերաբերում է Քեոզորոսին, սա համաձայնվեց իր շահույթի կեսը վիջել Սրուսաղեմի հայկական վանքին, իսկ մյուս կեսը՝ Հուլի վանքին: Ոսկանը խանդավառված այս երեք հայերի խոստումներից, մեկնեց Ամստերդամ որտեղ նա արագորեն սկսեց տպագրությունը: Այդ բանի համար նա գործ ածեց այն տառերը, որն օգտագործում էր իր եղբայր Ավետիսը, որովհետև Ծարեցիի տառերը շփարհանց խոշոր էին և սակավ գործածական: 1666 թվականին Ոսկանը Ամստերդամում ավարտեց իր առաջին հայկական Աստվածաշնչի⁶ տպագրությունը՝ փայտափորագիր նկարագրերով: Սրանով ի կատար ածվեց իր, գուցե և Ամստերդամի քրիստոնյա հայ համայնքի մեծ ցանկությունը:



Նկ. 3. Մի էջ Ղուկաս Վանանյեցու հայերեն բառարանից՝ գրված իր ձեռքով:

Որքան ինձ հայտնի է, ներկայումս 1666-ի այս հայերեն Աստվածաշնչից գոյություն ունի ևս երեք օրինակ: Այս երեք օրինակից մեկը գտնվում է Լեյդենի համալսարանական գրադարանում, իսկ երկրորդը՝ պահվում է Փարիզի Ազգային գրադարանում: Ազգային գրադարանի այս հայերեն Աստվածաշնչի մասին պրոֆ. Բեյվանկը (Byvanck) 1933-ի «Շնագիտական տարեգրքում» զետեղված իր հոդվածում պատմում է մի բանի հետաքրքիր մանրամասնություններ: Նախ պրոֆ. Բեյվանկը հավատացնում է, թե այն տառերը, որ Քրիստոֆել Վան Դեյլը կտրել է հայազգի Մատթեոս Ավագի համար, տակավին գոյություն ունեն և պահվում են ներկայումս Վենետիկի ծովալճակում (լագունայում): Իր այս տեղեկությունը պրոֆ. Բեյվանկը բաղել է Ch. Enschede-ի «Fonderies des caracteres et leut materiel dans les Pays-Bas du XV au XIX siecle» աշխատությունից (էջ 69) և նույնպես մատնանշում է M. M. Kleer-Kooper-ի և W. P. van Stockum-ի «De boekhandel te Amsterdam» աշխատությունը (հատոր

1, էջ 24): Այնուհետև պրոֆ. Բեյվանկն ասում է, որ գոյություն ունի առաքելական փոխանորդ Johannes van Neercassel-ի հանձնարարական (1668 թ. հոկտեմբերի 22)...

Փարիզի Ազգային գրադարանում գտնվող Աստվածաշնչի օրինակը, բացի հիանալի կազմ ունենալուց, նշանավոր է նաև արքա Լուդովիկոս XIV պատվին տպագրված նամակով (1669 թ.), որը միասին կազմած է Աստվածաշնչի հետ: Գուցե այս աստվածաշունչն ուղարկել են Ֆրանսիայի թագավորին, հույս ունենալով, որ այդ նվերը կհասուցվի դրամական սի գումարով, ինչպես սովորաբար տեղի էր ունենում նման դեպքերում: Բայց պետք է հատուկ խոսել այս Աստվածաշնչի հիանալի կազմի մասին: Այս կազմը պատրաստել է ոչ այլ ոք, քան Ամստերդամի մեծ վարպետն այդ ճյուղում՝ Ալբերտ Մաչնուսը: Գրքերի կազմարար և առհասարակ կազմեր պատրաստող Ալբերտ Մաչնուսի մասին, հրկյառ տառիներ բավական շատ բան էին գրում: Այդ հրապարակումներից Mr. H. F. Wijnm-ի «De Amsrerdamse boekbinder A'bert Magnus» հոդվածը «Oud-Holland» պարբերականում (1937 թ., 44-րդ տարի) ամենալավերից մեկն է նաև նրանով, որ գրական մանրամասն ցուցադր է տալիս և շփարհանց հեշտացնում է հետագա ուսումնասիրությունը...

Փարիզի հայերեն Աստվածաշունչը, նախքան այն Լուդովիկոս արքային ներկայացնելը, Ալբերտ Մաչնուսն ամփոփել է մի զեղեցիկ կազմի մեջ, մի կազմ, որով մենք հիմա ևս կարող ենք հիանալ: Ալբերտ Մաչնուսը զարդարել է նաև Աստվածաշնչի կտրվածքները հիշարժա-

6 Իրականում Ոսկանը Աստվածաշնչի տպագրությունն ավարտել է 1668-ին:

նկարներով: Կազմը բաղկացած է ծանր փայտի տախտակներից, 27×21 սմ., և պատած է մատուցի կաշվով: Կտրվածքը 8 սմ հաստություն ունի: Մեջքն ունի հինգ կողեր: Առաջին երեսը գրեթե ամբողջովին զարդարված է ոսկեզօծ նկարներով և ունի 5 շրջանակ, որոնցից յուրաքանչյուրը մյուսից բաժանվում է կրկնակի գծով: Այս շրջանակների մեջ եղած հարթությունը լցված է բազմատեսակ զարդարանքներով: Մեջտեղում կա ձվաձև մեղալիոն, որտեղ փորագրված է խաչված Քրիստոսը՝ կույս Մարիամի և Հովհաննեսի միջև: Խաչի վերևում կան ծանոթ գրերը՝ Ն. Ն. Ք. Ն. Խաչը կանգնած է J. H. S. տառերի վրա: Հետևի կազմը ևս գրեթե նույն ձևով է զարդարված. մեղալիոնում Մարիամ կույսը պատկերված է կիսալուսնի վրա նստած: Քրիստոսը խաչված վիճակում պատկերող մեղալիոն մենք հանդիպում ենք նաև մի այլ հայերեն գրքի առաջին և հետևի կազմի վրա: Դա գտնվում է Ամստերդամի համալսարանական գրադարանում և պրոֆ. Մակլերի կողմից այսպես է նկարագրվում. «(Վի՛մ հավատո... Կ. Պոլիս, տպարան Մահտեսի Աստվածատուրի, 1773) ընդ 660 էջ. Տպագրիչի հիշատակարան, 1660 էջ: Գրքի կազմը փայտից, ամբողջովին հորթի կաշի. երկու երեսին էլ ոսկյա զարդարանքներ, մեջքի վրա ծաղկազարդեր: Երկու երեսի վրա՝ «խաչելությունը» Յ. Ն. Ք. Ն. Խորագրերով և երկու ճարմանդ: Վերևի երեսում՝ «Ալեքսանդր Դ. Լ. Մասսե»:

Փարիզի Աստվածաշնչի կազմի կտրվածքները, իմ կարծիքով, զարդարված են ինչպես հարկն է արժանի կերպով: Ոսկեզօծ մասերի վրա կատարված են զանազան գունավոր նկարներ: Ներքևի կտրվածքի վրա, ի միջի այլոց, կա մի կնոջ նկար միանձնուհու հագուստով, երկու ձեռքերով բռնած մի թաշկինակ, որի վրա նկարված է Քրիստոսի զուլխը: Ուտ պրոֆ. Մակլերի, այս նկարը սուրբ Վերոնիկային չէ որ պատկերում է իր քրտինք-թաշկինակով, այլ ավելի շուտ հիշեցնում է Եղեմիայի թագավոր Արգարի մասին եղած վաղեմի այն ավանդությունը, ըստ որի նա ուներ այն թաշկինակը, որի վրա դրոշմված է եղել Քրիստոսի զեմքը...

Պարզ է, որ Մազնուսը այս աշխատանքի համար ճշգրիտ հրահանգներ է ստացել Ոսկան եպիսկոպոսից: Գուցե և նա հենց նկարներ է ստացել, որոնց նա պետք է վերատպագրեր: Բացի դրանից այս պատկերները, իհարկե, լրացնում են մեր գիտելիքներն այն երևելի այլվեստի մասին, որով նկարներ էին դնում գրքերի կտրվածքների վրա: Հայտնի է, որ այս այլվեստը Մազնուսի աշխատանոցում կիրառվում էր հատուկ գերադասումով:

1666 թ. հայերեն Աստվածաշնչի մեր մատնանշած այն օրինակի համար, որը գտնվում է Լեյդենի համալսարանական գրադարանում—ըստ պրոֆ. Բիվանքի, նույնպես Ալբերտ Մազնուսն է կազմ պատրաստել: Այս կազմը ևս բաղկացած է ամուր տախտակներից 27×21 սմ չափով,— ուրեմն նույն չափի է, ինչ Փարիզի Աստվածաշնչինը,— ծածկված է հորթի կաշվով և ներկված է այնպես, որ կրիայի վահանի է նմանվում: Կտրվածքը մոտավորապես 8,5 սմ հաստություն ունի, մեջքն ունի 5 կողեր: Կազմի երեսների զարդարանքները բաղկացած են երկու շրջանակից, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է տերևներից ու ճյուղերից կազմված մի զլախից, ուղիղ գծերի արանքներում կան թռչնիկներ. այդ գծերը իրենց հերթին, զարդարված են կողային զլաններով: Կտրվածքները պարզապես ոսկեզօծված են և ոչ թե փորագրված կամ նկարված:

Այժմ մնում է ինձ նշել Ոսկանի հայկական Աստվածաշնչի երրորդ պահած օրինակի մասին: Այս օրինակը ևս ունի ամուր փայտի տախտակներ, ծածկված հորթի շագանակազույն կաշվով, նույնպես 27×21 սմ չափով: Թե՛ առաջին և թե՛ վերջին երեսները ամուր կնքված են և զարդարված արևելյան ֆիգուրներով: Կտրվածքներն ունեն 8,5 սմ հաստություն և հինգ կող: Ամբողջ առաջին երեսի վրա կա մի մեծ խաչ, որը բաղկացած է կրկնակի գծերից, արանքներում նույն արևելյան ֆիգուրները: Այս Աստվածաշնչի երեք կտրվածքներն էլ զարդարված են ծաղիկներով և տերև-ճյուղերով: Չնայած նշված Աստվածաշնչը այնպես հարուստ կոթմ չունի, ինչ ունեն Փարիզի և Լեյդենի օրինակները, այնուամենայնիվ մենք մեզ երջանիկ պիտի համարենք, որ այս օրինակը ևս պահված է մինչ այսօր: Հասկանալի է, որ այս աշխատություն մեջ մենք գտնում ենք այն բոլոր նկարագրողումները, ինչ մենք տեսանք նախորդ երկու աստվածաշնչերի մեջ: Դեռ ավելին, այն ղեղեցիկ տառերը, որոնք հավանաբար Ոսկանը վերցրել է իր եղբայր Ավետիսից և որոնք գուցե փորագրել պատրաստել է Քրիստոֆել վան Դեյկը, թևն ղծված է պնդելը: Կարճ ժամանակ սրանից առաջ այս Աստվածաշնչն ինձ ցույց տրվեց Բ. Մ. Իսրայելի հնությունների տանը (Ամստերդամ, Սինգել ջրանցքի շրջան). նրա սեփականատերը ինձ պատմեց, որ այդ աշխատությունը պիտի վաճառվի Ամստերդամի գրադարանին:

Այժմ Ոսկանի Աստվածաշնչի երրորդ օրինակը բարեբախտաբար գտնվում է Ամստերդամի

7 Ոսկանի տպագրած Աստվածաշնչի շատ օրինակներ պահվում են Հայաստանի տարբեր գրադարաններում:

համալսարանական գրադարանի հայերեն գրքերի հարուստ ժողովածուի մեջ, Դրա հետ միասին գրադարանի հայերեն գրքերի թիվը հասավ 107-ի: Պրոֆ. Մակլերը իր բիրլիոգրաֆիայում նկարագրել է 104 գիրք, որին պիտի ավելացնենք ևս 2 գիրք, այն է Հայաստանի պատմությունը՝ 1669 թվականից և հոգևոր երգերի երգարանը 1702 թվականից: Սրանցից առաջինը ըստ երևույթին տպագրել է ինքը Ոսկանը, մինչդեռ մյուսը հավանաբար տպագրվել է Քոմաս վանանդեցու աշխատանոցում: Իր աշխատության մեջ պրոֆ. Մակլերը հիշատակում է 53 հայերեն գրքեր, որոնք տպագրվել են Ամստերդամում: Դրանցից 13 գիրք կա նաև Ամստերդամի հավաքածուում...

1666 թ հայերեն Աստվածաշնչի երեք օրինակների մասին մենք կարող ենք մի քան ևս ավելացնել. նրանց մեջ գտնվում են ի միջի այլոց Քրիստոֆել վան Դեյկի մեծ թվով փայտափորագրումները: Նրանք նույն փայտափորագրերն են, որ միաժամանակ գործ են ածվել երիտասարդների համար կազմած փոքրիկ Աստվածաշնչի մեջ և որը ես նկարագրել եմ Յան էվոլթսոնի մասին իմ հոդվածում: Այս բնավ չի նշանակում, թե Ոսկանն է տպագրել այդ փոքրիկ Աստվածաշնչը (որի մի օրինակը կա իմ հավաքածուում): Հավանական է, որ Ոսկանը փայտափորագրերը ունեցել է ավելի վաղ և Ամստերդամից իր մեկնելուց հետո հանձնել է վերահիշյալ Աստվածաշնչի հրատարակիչներին: Որովհետև արդեն պատրաստել էր իր հայերեն Աստվածաշնչը, ուրեմն պետք է կատարվեր իմ ավելի վաղ հիշված լիվորնոյի երեք հայ վաճառականների խոստումը...

Ոսկանը Ամստերդամում իր մնալու նախավերջին տարում (1668) լույս ընծայեց «Alouesaidig»-ը (Աղվեսագիրք—գիրք խոստովանության) և նոր Կտակարանը, որն իր մեջ պարունակում է հետևյալ հաղորդումը. «...Ոսկան նպիսկոպոսի ջանքերով... իմ աշակերտ Կարապետի տպարանում... բայց մեր երկուսի տառերով և աշխատակցությամբ... իմ առաջին իղձն էր. նոր Կտակարանը ըստ Հեթում արքայի Աստվածաշնչի»:

Այս հիշատակարանը ընտրոշ է նրանով, որ շնայած Ամստերդամի տպարանը Ոսկանի անունով էր, բայց նրա աշակերտ Կարապետը նրա իսկական տներն էր: Մենք իմացանք, որ դեռ 1664 թ. տպարանը լույս ընծայեց Կարապետի աշխատությունը: Անկասկած այդ գործում ֆինանսական կողմը մեծ դեր էր խաղում: Եվ իրոք, մի այլ տեղից մենք իմանում ենք, որ Ոսկանը անկանոն կերպով էր ֆինանսական օժանդակություն ստանում: Դրամի պակասությունը հաճախ Ոսկանին բոլորովին անկարող էր դարձնում: Հակառակ դրան Ոսկանը անխոնջ կերպով շարունակում էր աշխատանքը: Կարապետի անվան մեջբերումով մենք ծանոթացանք Ամստերդամի ևս մի այլ հայ տպագրիչի հետ:

1670-ին մենք նորից Ոսկանին գտնում ենք Լիվորնոյում: Ֆրանսիացի լեզվաբան Յ. Դ. Բորին (J. D. Bory) իր «Les origines de l'imprimerie a Marseille. Recherches historiques et bibliographiques» (1958) գրքի մեջ նոր տեղեկություններ է ապրիս մեզ Ոսկանի մասին: 1670 թ. Ոսկանը Լիվորնոյում հրատարակում է «Պարտեզ» անունը կրող աղոթագիրքը, որը շատ քիչ բանով է տարբերվում արևելյան աղոթագրքերից: Նա հետաքրքրվում էր նաև արևմտյան եկեղեցու կատեխիզմով: «Պարտեզ» գիրքը հետևյալ հաղորդումն ունի. «Տպված յամի տյառն 1670 լիվորնոյում (գրքի մեջ Librairie), Ս. էջմիածնի և Սուրբ Սարգսի տպարանում: Գրքույկի մեջ տպված է նաև «in Livorno con licenza dei superiori» (Լիվորնոյում) կառավարության թույլտվությամբ): Նույն գրքի վերջում մենք կարգում ենք՝ «Այս գրքույկը, որ հոգևոր պարտեզ անունն է կրում, ավարտվեց հայկական 1120 թվականին, երևանցի Ոսկանի թույլտվությամբ և Անդրինեցի (Անդրիանուպոլիսի) Կարապետի սրբագրությամբ: Ոսկանի կողմից հիմնված տպարանները միշտ կրում են «Սուրբ էջմիածին և սուրբ Սարգիս» անունը Ամստերդամում, Լիվորնոյում, Մարսելում, ինչպես և Կոստանյուիսպոլսում (Ստամբուլ)...

Երբ վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադիրը կամեցավ սկսել տպագրական գործը և ծանոթացավ Ոսկանի տառերին, ցանկություն հայտնեց, որ դրանք տրամադրվեն նաև իրեն: Մյուս կողմից նրան հայտնի էր, որ Ամստերդամում Ոսկանի տպագրական գույքը բռնադրվել էին նրա պարտատերերը: Դրա կապակցությամբ այնուամենայնիվ նա անհրաժեշտ քայլեր արեց իրեն ապահովելու տառամայրերով և տառերով: 1729 թ. ժամանակագրությունից պարզվեց, որ Մխիթար Արքան խնդրել էր իր բարեկամներից մեկին՝ հայ վաճառական Հարությունին՝ Ամստերդամ կատարած իր ճանապարհորդություններից մեկի ժամանակ պարզել, թե որտեղ կարելի է գտնել Ոսկանի տառերը: Եվ իրոք հայ վաճառական Հարությունին հաջողվեց Ամստերդամում գտնել Ոսկանի մի պարտատիրոջ կամ պարտատերերին և տեղեկանալ, թե ինչ գումար էին պահանջում, որպեսզի հանձնեն Ոսկանի տպարանական գույքը: Բանակցությունների արդյունքի մասին նա հաղորդեց Մխիթար Արքային, որն ընդունեց Ոսկանի պարտատերերի պայմանները: Հետո Ամստերդամից նրան ուղարկեցին Ոսկան նպիսկոպոսի տպարանի

գույքի մի մասը, գույցն և ամբողջ գույքը, որը բաղկացած էր ի միջի այլոց խոշոր և մանր տաներից, տպագրական նշաններից, պունկտներից, տառամայրերից և այլն:

* * *

Բացի այն հայ տպագրիչներից, որոնց մենք արդեն հիշատակեցինք, Ամստերդամում աշխատում էին նաև ուրիշ շատ հայ տպագրիչներ: Նախ և առաջ մենք պետք է ուշադրություն հրավիրենք այն բանի վրա, որ Ոսկանը Ամստերդամից իր մեկնելուց հետո, դարձյալ կարճ ժամանակով վերադարձավ և աշխատեց մինչև 1672 թ.: Այնուհետև մենք իմացանք Մատթեոս Վանանդեցու տպարանի մասին Ամստերդամում: Մատթեոսն իր արվեստի մեջ բավական վարպետ էր, և պետք է որ համարվի Ոսկանի իսկական հետևորդը: Ամստերդամում նրա առաջին աշխատանքը եղավ փորագրել տալ զանազան ֆորմատի նոր տառատիպեր: Մրանք հավանաբար այն հայերեն տառերն են, որոնք հիշատակված են նոտար Ֆրանսուա Տիքսեռոյեթի արձանագրության մեջ և փորագրված են Նիկոլասս Կիսի կողմից: Նոտարի արձանագրության մեջ հիշատակված տարին ճիշտ համընկնում է Մատթեոս Վանանդեցու, որպես տպագրիչի աշխատանքի սկզբի հետ, այն է 1685 թ. Ամստերդամ:

Քովմաս Վանանդեցու կողմից գործ ածվող տառերը լավ որակի էին: Դա պարզ երևում է ֆրանսիացի մի գիտնականի (որն ուզում էր հրատարակել հայերեն մի աշխատություն) նամակից ուղղված Գիզերետ Կուպերին: Նրանում ասված է ընդ կաշխատեմ հստակորեն արտահայտել իմ դիտողություններն այս լեզվի նկատմամբ, եթե միայն աստված կամենա, որ ես, ինչպես Շրեդերը, իմ ձեռքի տակ ունենամ հայկական այն նշանագրերը, ինչ նա ունի իր տրամադրության տակ Ամստերդամում: Այս բանը թերևս ինձ կհարկադրի տարվա վերջին մի շրջագայություն կատարել Հոլանդիայում, եթե աստված պահպանի իմ առողջությունը:

Այս նամակում հիշվող Շրեդեր անունը ակնարկում է Վանանդեցու գերմանացի մի աշակերտի մասին, որը Վանանդեցու մոտ սովորելու շնորհիվ տիրապետում էր հայերեն լեզվին: Ամստերդամում 1711 թ. նա հրատարակեց իր «Thesaurus linguae armenicae» աշխատությունը, որը միշտ էլ ճանաչվել է որպես ամենալավ օժանդակ գիրքը հայերեն սովորելու համար: Այս գրքում գտնվում են զեղեցիկ զարդատառեր, որոնք կազմված են մարդկանց, ձկների, օձերի ֆիգուրաներից և նկարներից, որոնց մենք հաճախ հանդիպում ենք հայերեն հրատարակությունների մեջ, ի միջի այլոց նաև Ոսկանի 1666-ի Աստվածաշնչի տիտղոսաթերթի մեջ: Մատթեոս Վանանդեցու տառերը ևս հետագայում զնեց հռչակավոր Մխիթարյան միաբանության հիմնադիր Մեխիթարը կամ Մխիթարը: Այդ տառերը տակավին գործածության մեջ էին 1835 թ. Մխիթարյանների մոտ...

Սրբրորդ հայկական տպարանը բավական լավ հաջողություն ունեցավ, և նույնիսկ երկաթ ժամանակ ծաղկեց ու զարգացավ: Մատթեոսին և կամ Քովմաս Վանանդեցուն տպագրական գործում աջակցում էր նրա ազգական Ղուկասը, որը նույնպես անվանվում էր Վանանդեցի, սակայն Nariglades հավելյալ կոչումով: Հորեղբոր և հորեղբորդու Վանանդեցի անունը հաճախ երևան է գալիս բավաթիվ հայկական հրատարակությունների մեջ: Հայտնի է, որ Ղուկաս Վանանդեցին ակտիվ աշխատանք էր տանում հայոց լեզվի տարածման համար Ամստերդամում: Հայտնի է նաև, որ նա սկսեց կազմել հայերեն բառարան, որը հասցրեց մինչև է (ե) տառը: Ամստերդամի համալսարանական գրադարանում պահվում է Ղուկաս Վանանդեցու այն ձեռագիրը: Այնուհետև Ղուկասը կատարել է մի քանի թարգմանություններ: Բացի դրանից հետաքրքրական է հիշատակել, որ 1666-ի Աստվածաշնչի մեջ Ոսկանի գործածած տառերը փորագրել պատրաստել էին Ամստերդամի վարպետները... Այդ տառերն այնքան լավորակ էին, որ օրինակ էին ծառայում 1680 թ. Գերմանիայում տպագրված առաջին հայերեն Akoluthus «Obadias» գրքի համար...⁸:

⁸ Շարունակության մեջ հեղինակը բերում է մի քանի փաստաթղթեր, որոնք հրատարակված են մի շարք հայկական աղբյուրներում (Ձ ա Ր Բ Բ ա ն ա լ յ ա ն, Պատմություն հայկական տպագրության, Ս ա Ր Ո Ւ Յ ա ն, Հոլանդիան և հայերը): Նա հղվածի վերջում տալիս է նաև Ամստերդամի համալսարանի գրադարանում պահպանվող հայերեն հնատիպ գրքերի ցանկը: